

*Hentchak:*  
ORGANE DU PARTI  
RÉV. ARMÉNIEN  
HENTCHAKISTE.

# ՀԵՆՉԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

## ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Հասարակական մի կուսակցութիւն չէ կարող լինել առաջաւոր առանց իդէալի: Երա համար այդպիսի եկէալ կարող է լինել՝ հասարակական կեանքի ընդհանուր վերակազմութիւն՝ ազգային ու հանրամարդկային բարօրութեան նպատակով: Ամենաառաջաւոր մի կուսակցութիւն տեսակէտից այդ վերակազմութիւնը պէտք է հաստատէ նոր հիմունքների վրայ: Որո՞նք են այդ հիմունքները: Երանք, որ բաղաբակերթ կեանքի զարգացման արդիւնք են. նրանք, որ ծագել են և առաջանում են այդ կեանքի պայմաններից, դրա արդանից. նրանք, որ զիտութիւնն էլ իր կողմից գալիս հաստատում ու որոշում է:

Հայերիս մէջ այդպիսի մի կուսակցութիւն ստեղծւեցաւ Հնչակեան կուսակցութեան ծագումը: Երա ստեղծողն էր պատմական բօպէն: Այդ ստելով, մէնք հասկանում ենք երկու կէտ:

Եռաջին՝ հայ ժողովրդային և ազգային պատմական ընդհանուր կացութիւնը: Այդ կացութիւնը ծնունդ էր ոււել հասարակական, բաղաբական ու տնտեսական նորանոր երևոյթների ու պահանջների: Հայրկ էր մեկնաբանել այդ երևոյթների իմաստը. Հայրկ էր որոշել, արտալայտել ու ձեւակերպել այդ պահանջները՝ նոյն հռեակ տեսակէտից. — և այդ գերեն ընկաւ “Հնչակի” և Հնչակեան կուսակցութեան վրայ: Եռաջինը եղաւ մտածող և ու զեցոյց, երկրորդը՝ գործօն յարմին, ձգտող՝ կենսական մարմնացումն տալ գաղափարներին:

Երկրորդ կէտն է բաղաբակերթ ազգերի կեանքի ներկայ պայմանները, դրանց պատմական զարգացումը, դրանց առաջիսազացութիւնը դէպի հանրակացութեան աւելի արդար, աւելի բարեկեց, աւելի բարձր դրութիւն, որը հիմնւած լինի աշխատանքի և հաւասարութեան սկզբունքների վրայ, հասարական բոլոր դասակարգերի վերացումով:

Այդ երկու հանգամանքներն են, որ ծնունդ ձեռքեր վերականգնելու այն: Այսպէս, զետակը

ADRESSE  
M. BELLART,  
85, Peckham Rye  
LONDON, S.E.  
Angleterre.

տւին Հնչակեան կուսակցութեան, որ եղան հիմունքներն ու պայմանը նրա գոյութեան, որ սնունդ տւին և զարգացրին նրան:

Այդ հանգամանքներն են նաև հիմնական պայմանն ամեն իրապէս առաջաւոր հասարակական կուսակցութեան գոյութեան ու գործունէութեան ամեն բաղաբակերթ ազգի մէջ:

Այդպիսի հասարակական կուսակցութիւն իր երակներում միշտ կրում է կենդանարար արիւն՝ ընդունակ մնալու թարմ և կորովապէս եռալու, միշտ հետամուտ լինելով լուսաւոր գաղափարների յաղթութեան: Եա կրում է իր մէջ այդ ներքին մշտանորոգ զօրութիւնը շնորհով իր հայեցակէտի և մտածման եղանակի լայնութեան ու խորութեան, որն ընդգրկում է մարդկային կեանքի երեղիթների ամբողջ աշխարհը: Եա, այդպիսով, ներկայանում է ոչ միայն պարզ բաղաբական մարմին, այլ հանդիսանում է արտայալտիչ փիլիսոփայական մէկ ամբողջ աշխարհահայեացը, աշխարհահայեացը, որ յայտնւում է գիտականապէս մարդարէ մարդկային կեանքի ապագայի բախտաւորութեան, արդարավայել կացութեան և անվախճան զարգացման,

Այդ ներքին կորովութիւնն է, այդ ներքին ինքնարուղի զօրութիւնն է ահա՛, որ միշտ վերանորոգում է կուսակցութեան ոյժերը, աւելի և աւելի բանում նրա առջև նորանոր ասպարէկներ, աւելի և աւելի ընդարձակում նրա մտքել ու գործունէութեան հօրիզոնները: Հակառակ թշնամու մշտանորոգ ուժգին հարւածների նա մնում է կանգուն: Հակառակ տիար մտքերի և յոռեալիս զգացողների կողմից թակարդւած ներքին խորովութիւնների՝ նա բայլ առ բայլ պաշտպանում է իր զիրքն ու գերը: Հակառակ, վերջապէս, իր գործունէութեան ժամանակաւոր անաջողութիւնների ու դժւարութիւնների՝ նա մնում է զարձեալ կենսունակ, գարձեալ ամուռ ու բարձր, ընդունակ նորից ու նորից վերակտզմւելու և վերսկսելու իր՝ առժամանակ ընդհատած՝ առաջիսազացընթացը: Եհ, բանդեցէ՛ք տաճարը, բայց թէկուղ բանդւած նա գարճեալ տաճար է; և միշտ կը գտնեն հզօր ձեռքեր վերականգնելու այն: Այսպէս, զետակը

բղիսելով իր աղքիւրեց, զլորւում է անդադար առաջ, բանում է իր ձանապարհը, առատացնում իր ջուրը, ընդայնում է իր ափերը, փուռում, տարածւում է իր հպարտ հոսանքով, հակառակ ամեն արգելքների: Խա անսպառ է, որովհետեւ մայրական ծոցը շարունակ մատակարարում է նրան նորանոր կոհակների թարմ ոյժեր:

Հասարակական կուսակցութեան համար այդ ոյժերը կայանում են նրա գաղափարներում, նրա աշխարհահայեացըում: Այդ աշխարհահայեացըն է, որ մարդ է հանդիսանում նրա անկեղծ ու բարերար գործունկութեան և, հետեարար, նրա օգտակարութեան հարազատ ժողովրդին ու մարդկութեան:

Մեռեալ-ծնւած է այն կուսակցութիւնը, որ զուրկ է հիմնական աշխարհահայեացըից և որի այդ աշխարհահայեացըը չէ յայտնուում արտայայտող ազգային և միանգամայն բաղաքակիրթ մարդկութեան ժամանակակից անվտիճան առաջադիմութեան ձգտումների, գաղափարների և բարեկազմութեան նպատակների:

Բարձր ու լայն աշխարհահայեաց՝ հիմնւած լուսաւոր գաղափարների վրայ և դրանց շնորհով՝ յարատեւ ու համարձակ գործունկութիւն—ահա չնչակեան կուսակցութեան երկարամեայ աւանդութիւնը: Հետեւեցէր զրան—և ձեր առաջ կը բացւեն նոր հօրիզոններ իրանց աւետաբեր արշալոյաներով:

## ՄԻ ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

### ՄՐԱԳԻՐԸ

“ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ,”  
ՆՊԱՏԱԿ

Զբաղւել հայ ժողովրդի ընդհանրապէս՝ և տաճկահայերի՝ մասնաւորապէս՝ անտեսական, սօցիալական և բաղաքական կացութեամբ:

### ՄԻՉՈՑՆԵՐ

1. Ընկերութիւնը ունենալու է սեմեստրական ժողովներ, որոնց նիւթ կարող են լինել դասախոսութիւններ (առնւազն երեք անդամ):

2. և ընթացիկ խնդիրներ:

Ծանօթ. Դասախոսութիւններին հրաւիրում են և կողմանի անձնաւորութիւններ թէ՛ Լայպցիգից և թէ այլ բաղաբներից:

### ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

2. Անդամ կարող են լինել լայպցիգի հայ ուսանողները և ուսանողուհիները:

3. կարող են նոյնպէս անդամակցիլ և այլ բաղաքրում ապրող ուսանողուհիները և ուսանողները:

Ծանօթ. Ոչ-ուսանողները կարող են լինել

արտաքոյ կարգի անդամներ:

### ԳԱՆՉԱՐԱԿԱՆ

4. Անդամները վճարում են ամսական 1 մարկ և աշխատում են կողմանի միջոցներով նպաստել գանձարանին:

5. Նիւթական օգնութիւն է ուղարկում գոյութիւն ունեցող Յեղափոխական կենտրոններին:

6. Ընկերութիւնը աշխատում է կազմել իւր նպատակին համապատասխան գրադարան:

7. Ընկերութեան վարչութիւնը բաղկանում նախագահից, գանձապահից և մի քարտուղարից: Աարշ. անդամները ընտրում են իւրաքանչիւր սեմեստրի սկզբում: Նրանք ունենում են իրենց անձնափոխանորդները:

### ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

#### ~~~~~

Վերը հրատարակած ծրագրից՝ ինչպէս տեսնում է ընթերցողը, Լայպցիգում կազմւել է մի նոր ուսանողական ընկերութիւն, որը իրեն նպատակ է գրել գոյութիւն ունեցող ու երկրում գործող յեղափ. կուսակցութիւններին նիւթապէս օգնել անխտիր:

Լայպցիգը՝ Եւրոպայի հայ ուսանողութեան համար մի տեսակ մտաւորական կենտրոն է ներկայացնում, երեկի այդ է պատճառը, որ նա անցեալումն էլ յայտնըում է մի քանի հիմնարկութեանց նախաձեռնողը. ինչպէս է Ճեմարանական ընկ. և լին ինչպէս տեսնում էք, նրա այս նոր կազմած ընկերութիւնն էլ այնքան նպատակայարմար ու այնքան ժամանակակից է, որ մենք մեր ողջունում ենք նրա երեւան գալն և մաղթում տոկունութիւն ու յարատելութիւն:

Առիթից օգտաելով, մի քանի նօսք պիտի ասենք ժամանակակից հայ ուսանողութեան բանած գիրքի մասին դէպի հասարակական այրով խնդիրները, որը վերջին տարիները զբաղեցնում է թէ լէտալ և թէ յեղափոխական մամուլը: Պարզ է՝ որ մենք մեր ակնոցով պիտի նայենք ինդիր վրայ և հետաքրքրւինք իմանալ, թէ ցարդ ուսանողութիւնը որբանով է մասնակցել յեղափոխական գործին: Դժբաղդաբար պառասխանը շատ աննպաստ է ուսանողութեան համար ու հիասթափեցնող՝ իւր ճշգնաժամային վիճակում” իրա այդ “թարմ ու զարգացած մասից այնքան ակնկալութիւններ ունեցող հասարակութեան համար. . . :

Մենք բուռն հետաքրքրութեամբ թերթում ենք մեր 10—15 տարւայ յեղափոխական պատմութեան էջերը, որ տեսնենք թէ ազատ Եւրոպայի հայ ուսանողութիւնը որբան թւով գաղափարի անվեհեր զինորոներ է մատակարարել մեր թշուառ ազգին, որոնք իրենց ձեռք բերած գիտութիւննը միացնէին սրտի ազնիւ զգացմունքների հետ և մտնելով տառապանքի երկիրը թէ անձամք սրբէին թշուառ եղբայրների և բոյրերի դառն արտասուբը, հոգի տային, սիրտ տային, նեցուկ լինէին նրանց և թէ յեղափոխական պրօպագանդայի հետ վարեկն նաև յեղափ. կազմակերպական գործը և իրենց անձնազնութեան ու անձնաւորութեան բարձր օրինակով խըրախուէին, քաջալերէին ու անվեհերութիւն ներշնչէին

արեան մէջ լողացող եղբայթներին . . . : Եւ մեր մի քաշնի հարիւր հազար դիմակների կոյտերի մէջ միայն երկու այդպիսի դէմքերի ենք հանդիպում, բարսել ջաշբարեանց Մարզւանում և Մարտիրոս Սարուխանեանց (Մարտիր) Վանում: Հէնց այդ պատճառաւ էլ նրանք աւելի մեծանում, պայծառանում և մի տեսակ գերադոյն կերպարանք են ստանում մեր աչքում: Իոկ ուսանողական լէգէո՞նը . . . Նրա ամէնազգայուն մասը միայն, ուսանողական նստարանի վրայից մի քանի մոթովուներ արձակելուց յետոյ խառնուում է միւս մասի հետ, իսկ բոլորը միասին, խառնուում, լուծուում, կուլ է գնում այն զանգւածի մէջ, որը իրա գլուխից այն կողմը ոչինչ չէ տեսնում ու մեծ, շատ մեծ բարիք արած է համարում, եթէ երբեմն ազատ ժամերից կիսահեգնական ժպիտը երեսին, թեթև զբանք կատարէ ազգասիրութիւն՝ անելով . . . :

Մենք գիտենք հայ բուրժուան երբէք ցոյց չի տար թէ ինքը համոզւած է յեղափ. օգտակարութեան մէջ, ի՞նչ ձեռք կտայ այդ իրեն: Գիտենք կղերականութեան գերը, որ բռնակալի ոտները լիզելուց այն կողմը չի անցնում . . . ,

Այդ երկու գասակարգերից գուրս—եթէ այդպիս կարելի է անւանել—մնում են ուսանողականունը՝ մեր “ամենազրացած”, մասը և բուն ժողովուրդը՝ ամենառամբնակը: Բնական էր, որ առաջինը երկրորդին զեկավարէր, առաջնորդէր, բայց . . . աստղներ կան թէ, ուսանողներից շատերը ոչինչ չգիտեն, ոչ յեղափախութեան և ոչ յեղափախական կուտակցութեանց գոյութեան մասին: Իսկ դիտցիներն էլ համոզւած չեն յեղափ. օգտակարութեան և Նրա յաջողութեան մէջ, պէտք է համոզի նրանց երկար տարիներ, երբ որ կհամոզւեն այն ժամանակ կգործեն: Խեցիք... աարօրինակ արդարացում . . .: Մեր ուսանողութիւնը գեռ տեղեակ չէ այն բանին, որ մեր երկիրը տակնուվրայ է լինում և 100000-աւոր զոհերի արիւնը ոռոգել է նրան մինչեւ վերջին բուռ հողը: Մեր ուսանողութիւնը համոզւած չէ այն պարզ ձմարտութեան մէջ, թէ բնաջնջումի անօրէն վճռին ենթակայ ժողովրդին, ուրիշ ոչինչ չէ մնում, բայց այն՝ որ ինքն էլ իւր կողմից մահառիթ զէնքը ձեռին դիմաւորէ իւր անգութ գահձին: Այդ է սովորեցնուամ մեղ պատմութիւնը և մեր բախտակից եղած աղքերի օրինակը, այդպիս են թելադրում մեզ, մեր ազգային կեանքին ծանօթ օտարազգի բարեկամերը: Անողորմ ձակատագիրը ու իրականութեան սոսկալի հարւաները իւր սեփական կաշու վրայ փորձող ժողովուրդը, տրամաբանօրէն այդ եզրակացութեան հասներով, այդ վճիռն է կայացրել անդառնալիօրէն: Եւ այդ բոլորից յետոյ, եթէ հաւատանք վերի փաստաբանութեան, միայն մեր ուսանողութիւնն է որ համոզւած չէ այդ պարզ ձմարտութեան մէջ . . . : Այժմ հարց է, եթէ իրաւ է որ այդպիս է, եթէ իրաւ է որ հարկաւոր է գեռ ուսանողութեան համոզել այդ բանի մէջ, ո՞վ պիտի ըստանձնէ այդ պաշտօնը, բարձրւուան թէ կղերականը: Բայց մենք տեսանք նրանց գերը, հապա ո՞վ ուրեմն, չէ որ մնում է միայն ուամիկը՝ ժողովուրդը և զարգացածը՝ ուսանողութիւնը, ուրիշն . . . ուամիկը պիտի համադէ ուսանողութեան, ի՞նչ դառն հեգնութիւն, գերերի ինչ տարօրինակ փոփոխութիւն . . . : Մեզ պատահէ լինել, թէ՝ «եղած մի բանի հոգին էլ, նախկին ուսա-

նողներ են», Էհ շատ բարի՝ բայց միթէ՞ բացառութիւն ները օրէնք են: Բայց դա արդէն չափեց դուրս է, աւելի դիւրին է ընդունել ուսանողութեան եսապաշտութեամբ վարակւած լինելը, ինչ որ ըստ մեր իրողութիւն է, քան թէ իրական ծմարտութեան մինչ այդ աստիճան անտեղեակ լինելը . . . :

Ինչ որ է, փակենք այդ, մեր նպատակը ուսանուաղութիւնը քննադատել չէր, այլ տոփիթից օգտւելով երողութիւնը մատնանիշ անել: Եւ հիմնելով իրողութեան վրայ, առանց յոռետես լինելու անգամ, մզ ուսանողութիւնը — չնչին բացառութեամբ — ցարդ շատ հեռու ենք դանում իրա պարտականութիւնը կատարէ րած լինելուց:

Անցեալի այդ տառուր փոնի վրայ երևան եկաւ Եւ ըոպ. Ուս. Միութիւնը, որը դարձեալ իրա ու յեղափոխութեան մէջ մի պատնէ էր պահում: Կըրան հետևեց սոյն ընկերութիւնը, որ մի բայլ ևս առաջ գնալով, նպատակ է դրել յեղ կուս. Նիւթապէս օգնել: Աշա այդ երկութը, մերձեցման այդ բայլն է որ մենք ողջունեցինք: Սակայն՝ մենք գեռ հեռու ենք եղածը գործնական ու անմիջական աջակցութիւն համարելու մտքից: Ճիշտ է՝ որ ամէն մի հասարակական աղէտի ժամանակ, կարօտ ժողովրդի կռպէկներից են գոյացել պատկառելի գումարները և ոչ երբէք հարստի միլիոններից: Այդ տեսակետից շնորհակացութեան արժանի է ոյն ընկերութեան նիւթապէս օգնելու որոշում, որը պիտի գոյանայ ուսանողական՝ յամախ շատ սուղ՝ բիւջէից: Բայց, ներկայ գէպքում, հարցը վերաբերում է յեղափոխական շատ լուրջ ու ծանրակշիռ ինդուն և ոչ թէ որ և հրդեհից կամ երկրաշարժից առաջացած առաժամանակայ աղէտին: Պարզ է որ յեղ յարատեղող գործը աւելի մեծ կարօտութիւն ունի գիտութեան պաշարով զինւած ուսանողների անմիջական ու գործնական օգնութեան, բան թէ այն մի բանի մարկերին, որ պիտի կազմէ ընկերութեան նիւթական օժանդակութիւնը:

Մաղթենք ուրեմն՝ որ ուսանողութեան հիմնած նոր ընկերութիւնը, անցեալի անգործութիւնից կտրւելու՝ Նրա իրական բայլը և գործնական յեղափոխութեան հետ կապող օղակը լինի: Կրնում ենք, նոր ընկերութիւնը չպիտի բաւականանայ իրա արած որոշումով, այլ հետաքրքը անդառներին հայկական կեանքին ներկայ փորկալից իրականութիւնով, վառէ, բորբոքէ նրանց սրտում այն սէրը ու կայծը, որ ընդունակ դարձնէ ըստանձնելու այն դերը, որը իրաւամբ սպասւում և պահանջում է նրանցից:

Իսկ հակառակ գէպքում, եթէ ուսանողութիւնը շարունակէ իրա կրաւորական գերը, այն ժամանակ հայ ժողովուրդը իրաւունք կունենայ բանաստեղծի հետ կրկնելու, “բայց թէ իներեգ շահ չունի հայաստան, թբել ենք բու ալ ինելքիդ ալ վրան:” Պատասենք և տեսնենք . . . :

## ԱՐԵՒԵԼՔՈՒՄ (\*)

—♦♦♦♦♦♦♦♦—

Եօթ տարի առաջ երբ հայկական շէների հարդելը կրակել էր Արեւելքի երկինքը և կոտորածների հարիւր հազարաւոր գիտները պատւանդան էին կանգնել ի փառս Արդիվ-Համիդի, ամեն կրծքերից, բաղաբակերթ աշխարհի մի ծայրից մինչև միւսը, դուրս ելաւ սարսափի աղաղակ:

Եւրօպական կարծիքը, մասնաւորապէս Անգլիայում, սժափուեց, յուղեց, վրդովեց: Յօդւածներ ամենօրիսների մէջ և ժողովրդային միտինդներ սկսան միմեանց հետ մրցել իբրև պաշտպաններ ճնշւածների, իբրև գատափետողներ նրան, որին Գլադստօնը նշաւակեց “Մեծ Մարդասպան” անունով:

Գրանսիայում սօցիալիստական կուսակցութիւնը եւլաւ, որ առաջնը բարձրացրեց իր ձայնը յօդուտ ճնշւածների մարդկային իրաւունքի: Ֆօրէսը, որ վերջերս, Շատո գ'Օ Թատրօնում կայացւած միտինգում, հէցեցրեց իր հզօր խօսքը, ժամանակին դրեց մի շարք յօդւածներ իր թերթում, “la Petite République” էջերում: Կայ նկարագրում էր հայ ժողովրդի դրութիւնը, բացարում էր հայ յեղափոխականների շարժումը, որպէս և այդ շարժման պատմական ուղղութիւնն ու նպատակները:

Եւ մինչդեռ Եւրօպայում հասարակաց կարծիքն անդադար գրգռում էր զայրոյթով և յուղում գթութեամբ, ամիսներ ու տարիներ էին անցնում, և անպաշտպան մնացած մէկ ամբողջ ժողովրդի ճիշերի տակ մարդկային դիակները կուտում էին միմեանց վրայ, առւլթանի կացինն անդադար զլորում էր հայ գլուխների վրայ, արիւնաի մոլեկան պարերն ու սատուրնալիան շարունակում էին հարբած կատաղութեամբ:

Հայ աղջը, այդ սոսկալի տարիներում, հակառակ անլուր աղէտների, որ հարւածում էին նրան, սրտաբաբախ փայփայում էր մօտալուտ ազտագրութեան յոյսը: Հէնց այդ զգացումն էր, որ Հայ յեղափոխականներին միջոց աւեց կազմակերպել ինքնապաշտպանութիւն թիւրբա-Հայաստանի այլ և այլ կետերում, ուր այդպիսի մի շարժում կրելի էր առաջնել հակառակ ամեն դժ. արութեամբ:

Բայց թողնենք պատմութեան այդ էջերը, էջե՞ր հեղեղւած մէկ ամբողջ ժողովրդի արիւնով, և բանք լոկ վերջինները:

Սի քանի շաբաթ առաջ նոյն միտինգում Գլ. Պրէսսնեկի պատմական խորին հմտութիւնը, նրա մարդկային ու բաղաբական դիտութիւն ու իմաստութիւնն ամբողջ աշխարհի առաջ պարզեցին Հայա-

տանի և Մակեդոնիայի աղէսարշ պատմութիւնը համիզական լծի տակ: Նրա խօսքը բաղաբակիրթ ազգերի աղնւագոյն միտքն էր և զայրացած խիզը: Նրա խօսքը բուռն էր ու բարձր գատախաղակիր էր ընդդէմ մեծ պիտութիւնների, որով ապացուցանում էր ամբողջ անարդարութիւնը նրանց անգործունեան, ամբողջ եսականութիւնը նրանց ինտէրէսների և փոխագարձ հակառակութիւնների ի մաս խաղաղութեան, որպէս և նրանց գաւակցութիւնը Մեծ Մարդասպանի հետ, որի ոտքը տապահաքար է գարձել մի շարք ժողովրդների համար, մինչդեռ սրանք, եթէ լինեն աղատ, ընդունակ են բերելու իրանց բաժին ծառայութիւնը մարդկութեան բաղաբակիրթութեան:

1895—96 թւականների գէպերը Հայաստանում արեան թերով կապւած են այն անցքերի հետ, որ այժմ հարւածում են Մակեդոնիային: Եւ նորից բացուում է Արևելեան ննդիրը, վտանգ սպառնալով Երբայի խաղաղութեան: Այդ գրութիւնը, սակայն, անսպասելի չէր: Որովհետեւ գեռ եօթ տարի առաջ կային նախագուշակողներ ահաւոր բարդութիւնների, ամեն մէկ օր կարող էին առաջանալ համբական բէժիմից՝ պատճառ ամեն յուղումների և աղէտների չեռատեսների աչքին դա մի պարզ մարդարկութիւն չէր՝ ստեղծւած յուետես մտքեսով: Ոչ գա մի համոզումն էր, որ նոյն իսկ գիւանագէտները չէին աջողում ջնջել իրանց նախամտածած համրութեամբ: Յայտնի էր, թէ մինչև որ Արևելեան ննդիրը լուծում չը ստանայ, սպառնալոց անակնկալներ պէտք է ժայթքեն այն խարոյիկց, որ միշտ վառ է պահւում արևելեան ննդիրիտօրի ձեռքով: Յայտնի էր, միւս կողմից, որ Եւրօպական տեսակէտից այդ ննդիրը չէ կարող ունենալ լուծում աւանց եռանդուն ու վճռական մի միջամտութեան մեծպետութիւնների կողմից:

Բայց այն ժամանակայ դիպլոմատիան—որը չէր տարբերում այսօրւանից—թոյլ տւեց, որ Արևելքի չարտաշուր բոնակալը ննդիրը խեղդէ անպաշտպան ժողովրդների արեան մէջ: Դա մի ոճիր էր մարդկութեան գէմ, և անցեալ օր Ֆօրէսը ցոյց տւեց արդպիսի մի դրութեան ամբողջ եղերական իմաստը՝ աւելացնելով: — “Դա նաև մի սխալ էր, և այսօր մենք կրում ենք պատիժը”:

Առաջ են բերում տարբեր ու պէս պէս ցեղերի գոյութիւնը և նրանց շահերի հակառակութիւնը Մակեդոնիայում: Եւ ես ինքս ինձ հարցնում եմ. — Ի՞նչ կարող են ասել, նոյն տեսակէտից, մեր երկրի, Հայաստանի նկատմամբ: Այստեղ չը կայ ժողովրդների պէս պիտութիւն. կայ երկու տարր, մահմետական ու հայկական: Ճիշտ է, այլ և այլ գաւառաներում այդ տարբեր խառն են, բայց միաժամանակ նրանք զատւած են իրարից, ընդհանուր առմամբ, աշխարհագրական շրջանների որոշ գծերով: 1895 թ. մենք կազմեցինք և լոյս ընծայեցինք Անդիիայում բէֆօրմների մի ծրագիր, որ գործադրելի է Հայկական նահանգներում: Առաջնորդւած միահամի կրկնակի հոգսով գէպի արդարութիւնը, այդ ծրագրում մենք ներկայացրած ու պաշտպանած ենք երկու տարբերի շահերը ևս միաժամանակ: Հարցաւ, ինդիրի այդ կողմը, Հայաստանի վերաբերութեամբ, ըոլորովին որոշ ու պարզ է: Արդինչու զանց առանց դոհացում տալ հայերի մարդկային

(\*) Այսի յօդւածը Թարգմանւած է Փրանսերէն գլուխ մի յօդւածից, որ գրւած է որպէս առաջնորդող Հայակաւոր ժամանակաւոր ժամանակաւոր գիտաւոր կայ Հայաստանի աշխարհի առաջ պարզեցին Հայա-

իրաւունքներին . . .

Այն, ինչ որ առաջացնում են այժմ՝ իբրև պատճառաբանութիւն մակեդոնական խնդրի լուծման կարելիութեան գէմ, ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ սերմանել թշնամնանը բալկանեան ցեղերի մէջ դէպի միմեանց, կամ խստովանանը գիտլումատիայի պատմական անկարութեան մակեդոնական հարցը վճռելու, և կամ խուսափման մի հնարք նոյն գիտլումատիայի կողմից: Գրանով նա ցանկանում է ծածկել իր թաքուն գիտութեարք, որոնք սակայն ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ Պոլիշինելի բացարար գաղտնիքներ:

Միւս կողմից, նոյն դիպլոմատիկան վերջերս կազմեց “ըէֆօրմերի” մի նախագիծ Մակեդոնիայի համար։ Եւրոպան մնաց ապշած այն աճապարանքի առաջ, որով սուլթանը հաճեց ընդունել վերոյիշած նախագիծը։ Մեր աչքին ապշուժեան առարկան նոյն իրա Եւրոպայի դիւրահաւանութիւնն է։ Նախագիծն ընդունեց, որով հետեւ ո՞չ միայն չէ տալիս որ և է բաւարարութիւն այն ժողովրդներին, այլ տարօրինակ կերպով ամրապնդում է սուլթանի դիրքը Մակեդոնիայում։ Այդպիսով նոյն իրա Եւրոպայի վաւերացումով՝ Մակեդոնիան, ոտք ու ձեռք կապւած, զրւեցաւ իր դաշնակի քամհաճոյքի տակ։

արձանանում է Եւրոպայի առաջ։ Մակեդոնացիների և հայերի արիւնը նրան հարկադրում է զբաղւել Արևելեան խնդրով։ Եւրոպական դիմատիան ճգնում է ծածկել այդ խնդիրը, բայց իսկապէս իր աչքն է ծածկում Հայկական խնդրի տակ, որպէս և Մակեդոնական, բորբոքւում է մի հրաբուխ — երկրի վարչական, տնտեսական ու աօգիտալական անկարգութիւնները։ Կայ միայն մի լուծում նրանց համար։ Հիմնովին վերակազմել երկիրն արդար հիմունքների վրայ, միջոց տալով նրա ժողովրդների կեանքի աղատ զարգացման։ Դա՛ է, այսօր աւելի քան երբ և է, միակ պարտականութիւնը, որ ընկնում է Եւրո-

Օրովհետև վերոյիշած թէֆօրմները մէկ այնպիսի նորութեւններ չունեն, որոնք արդէն և յայտարարւած չը լինէին սուլթանի բարեհամա կամքով նրա աւելի բան պլատօնական իրադէն երում։ Այդ նախագիծը կազմուած է առաւել կամ պակաս հնչիւն ու խաբուսիկ յօդւածներից։ Հիմնական կէտե այնտեղ փայլում է իր բացակայութեամբ, և սակայն այդ կէտն է որ կարող էր ապացոյց լինել նախագծի անկեղծութեան և նրա իրական երաշխաւորութեան։ Իւ այդ կէտն է — Եւրոպայի անմիջական ու մշտական վերահսկողութիւնը երկօրի բարենորդման վրայ։ Այդ կէտի բացակայութիւնից յետոյ այլ ևս ի՞նչ կայ զարմանալու, որ գահիձը գտնեւցաւ այնքան . . . մեծահսպիր։ Կամ միշտ արագ է իր յօժարութեան մէջ՝ ընդունել ամեն տեսակ նախագծեր, միայն թէ Եւրոպան մնար օտար գրանց գործադրութեան մէց։

պական դիվլօմատիայի վրայ և այդ՝ կրկնակի տեսակէտից — մարդասիրական ու քաղաքական։ Այդ նպատակին հասնելու համար չեն պակասում միջոցներ, խաղաղաբար ազդու և անվրէպ միջոցներ։ — մենք տեսանք այդպիսի ընթացք, այդպիսի պրէցէդէնտներ, և գա՝ բոլորվին նորերս։ Կունենա՞յ արդեօք եւրօպական գիպլօմատիան աչալրջութիւն կատարելու իր այդ պատմականութիւնը, թէ՝ այս անգամ ևս կը վրիպէ այն։

Ա. ՆԱԶԱՐԵՏԻԿ.

Բանը Նրանումն է, որ այդ բռնակալն ունի իրացատուկ եղանակն իր պարտականութիւնները լրացնելու մէջ — սրով, կրակով և արիւով: Եւրօպայի արած գործը նման է այն հովին, որ հօտը յանձնում է գայլի պահպանութեան: Խւ այդ է պատճառը, որ ամեն նախագիծ, որքան ել նա պարունակելու լինի ըէֆօրմեր և ամենասբանչելի խոստումներ, միշտ կը մնայ մեռած տառ:

պատճառները, քրօնիկական դարձած, այն անտանելի դրութեան, որ անդադար դզրդեցնում է Արևելքը և սպառնում է գլորել Խրօսան ամենատխուր աղէտների մէջ: Եթէ հայկական արիւնը, եթէ մակեդոնական արիւնը կարմրացնում են միայն Արևելքի հողը, և եթէ այդ իրողութիւնը արժէք չունի դիպումատիայի աչքն, հապա ում վրայ կընկնէ սարսափեիր պատախանատութիւնը, երբ մեր երօսացի եղբայրներն իրանց նետած տեսնեն միջազգային ընդհարման մէջ:

Ինչ որ էլ ասեն սակայն, կայ մի դատապարտիչ իրողութիւն, կայ մի պատմական փաստ, որ ամեն օր արձանանում է Եւրոպայի առաջ: Մակեդոնացիների և հայերի արիւնը նրան հարկագրում է զբաղական դիպումատիան ճգնում է ծածկել այդ խնդիրը, բայց իսկապէս իր աչքն է ծածկում՝ Հայկական խնդրի տակ, որպէս և Մակեդոնական, բորբոքում է մի հրաբուխ — երկրի վարչական, անտեսական ու աօցիալական անկարգութիւնները: Կայ միայն մի լուծում նրանց համար: Հիմնովին վերակազմել երկիրն արդար հիմոնների վրայ, միջոց տալով նրա ժողովրդների կեանքի ազատ զարգացման: Դա՞ և, այսօր աւելի քան երբ և է, միակ պարտականութիւնը, որ ընկնում է Եւրոպական դիպումատիայի վրայ և այդ՝ կրկնագի տեսակետից — մարդասիրական ու քաղաքական: Այդ նպատակին համար չեն պակասում միջոններ, խաղաղաբար ազգու և անվիճել միջոցներ. — մենք տեսանք այդպիսի ընթացք, այդպիսի պրեցէք է դէն տներ, և դա՝ բուօրովին նորերս: Կունենայ արդեք Եւրոպական դիպումատիան աչալրջութիւնը կատարելու իր այդ պատմական պարտականութիւնը, թէ՞ այս անդամը ևս կը վրիպէ այն:

Ա. ԿԱԶՅԵԲԻԿ

([a] Petite République)

# ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Անցեալ յօդուածում՝ արդէն ակնարկեցինք, որ  
թիւրբիան 1878 թ. բեռլինի վեհաժողովում յանձն ու-  
ուաւ վարչական բարենորդումներ մտցնել՝ որպէս Մակե-  
դոնիայում, նոյնպէս և Հայաստանում, ու, չնայած հան-  
րահոչակ Մ'ծ Պետութիւնների բարի կամեցողութեան, և  
“ստիպումներին”, առանց իրագործելու թողեց իւր  
խոստումներն ու պարտաւորութիւնները Մենք ասացինք,  
որ Սուլթան Աբդիւլ Համբէի խոստումներն աչքակա-  
պութիւններ, ձեռնածութիւններ էին, որովհետև շարու-  
նակ խոստացաւ. իւր յանձնառութիւնները կատարել,  
Մակեդոնիայի և Հայաստանի քրիստոնեայ ժողովրդների  
հալուծանքներին ու զարհուրելի կոտրածներին վերջ  
տալ, սակայն՝ մի կողմից եւրոպական “հանձնարեղ” դի-  
ւանագէտներին խոստացաւ անյապաղ իրագործել շարա-  
բաստիկ ու ֆօրմն երը, իսկ տակից կոտորելու, մօր-  
թոտելու և սպառապուռ ջնջելու գայրադ. հրամաններ  
արձակեց:

Այսպէս է: Ո՞ւր ասիական եփուած, ծեծուած, նենդամիտ բաղաքականութիւն, և ո՞ւր եւրոպական դիւտնագէտների փայլուն յաջողութիւններ, երբ սոյն դիւտ-

նագիտական փայլուն յաջողութիւնները հիմնուած լինին նախանձի, իրար ձեռքից ազգեր և ժողովուրդներ կոր. ղելու անյագուրդ բաղձանքի ու մանր, թշուառ ժողովուրդների արիւնով ու ուկարներով կառուցած շենքերի վրայ . . . : Ելդըզի արիւնախանձ գազանը վերջիւս էլ խոստացել և անյապալ ու է ֆօր մ'ներ մոցնել Մակեդոնիայում — իսկ Հայաստանում —, միւս կողմից ձեռքերը հրճուանքով շինով, որ իւր ձեռնածութիւնների սկզնն արդէն բացուել է, բաղմաթիւ հասարակութիւն գրաւելու տեխնով: Ո՞չ է իմարը որ Սուլթանի խոստումներին հաւատայ . . .

Բանն այն է որ Թիւրքերը, իրենց պապական սովորութեան համեմատ՝ այժմ էլ Ալբանացոց ու Մակեդոնացոց են մեղադրում, նրանց անխիզն, վայրագ անուանելով. գէպի ում, գիտէք . . . գէպի թիւրը միամիտ, անարատ... զինորները: Ճիշտ որ Հայաստանի օյինները: Զէ՞ որ ժամանակ էլ Հայ յեղափոխականներն էին „սրիկաներ” և „աւագակներ” . . . աւազակապետ Համիդի համար: Զարմանալի է կոտորել մորթոտել, բըռնաբարել ու լլկել է պատուիրում Աբդիւլ Համիզը բըրիստոնեայ ժողովուրդներին, բայց հէնց որ այս գարեւոր ճնշուած, հարստահարուած, մարդ կոչուած արարածներից գոնէ մէկը բացութիւն է ունենում իւր աշքի առաջ կնոջը բռնաբարող վայրագ գազանին կարմրաշեկ գնդակ կամ՝ պսպղուն գաշոյն հրացնելու՝ իսկոյն սուգերի ու գորտերի կոկորդը ականց են խլացնում . . . :

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ բուլգարացիք՝ Մակեդոնացոց ցեղակից ու գաւանակից լինելով՝ չեն կարող անտարբեր աչքով նայել կատարուող իրողութիւնների վրայ: Մի ժամանակ իրենք ազաւուեցին տաճկական նողկալի լծի տակից, այժմ էլ կը ցանկանան ու ցանկանում են Մակեդոնացոց էլ ազատուած տեսնել: Ահա թէ ինչու Մակեդոնացոց ապստամբական բայիերը, խրոխտ ընդվզումները բուլգարիայում մշտապէս յենակէտ գտան ու պիտի գտնեն նաև ապագայում: Բայց թէ ինչու, յանկարծակի, նոյն իսկ ի մեծ զարմանս Աբդիւլ Համիդի, Մակեդոնական բոլոր յեղափոխական կոմիտէները վակւեցան բուլգարիայում ու նրանց ցեղակարներն ու պարագուխները կալանաւորուեցան . . . Օ՛հ, այստեղ էլ, որպէս և միշտ ու ամենուրեք, Մեծ Պետութիւնների „բարի կամեցողութիւնները” ու մատը խառն են լինելու անշուշտ, կամ՝ գործը առանց „Պալմազալի”, վերջացնելու սրբազն ցանկութիւնը . . . : Ինչ որ է: Բուլգարիայի Ֆերդինանդ իշխանի և իւր գորովագութ հօր՝ Համիդի դիտաւորութիւնները — չէ՞ որ նորին պայծառափակալութիւնը՝ ներողութիւն՝ այժմ՝ արդէն նորին արբայական բարձրութիւնը՝ Պօլիս այցելութեան դնացած ժամանակ Մեծ Մարդասպանի ձեռքը համբուրեց ի նշան որդիական անհուն երախտագիտութեան — կը մրցեն իրար հետ, այսպիսի մի կարեր խնդրում: Յամենայն գէպս, թողնենք որ այս կէտը “Deutsche Korrespondenz” պարզաբանէ:

“Մի բանի շաբաթ ևս, և Մակեդոնիայի ձիւնապատ լեռները կը զրկուեն իրենց սպիտակափառ ծածկոյթիւններից: Քաղաքականութիւնը և կլիման զարմանալի սերտ կապակցութիւն ունին այստեղ. և, նայած ոռ Մեծ Պետութիւնների կարինետները ու դանեւի մինհարութիւնը մեղ կամենում են Հաւատացնել, թէ՝ Արևելեան Եւրոպայի անկիւնում խաղաղութիւն է տիրապետում, փաստերն, ընդհակառակը, երկիւղ են ազգում, որ ձիւների

հալուելուն պէս՝ Մակեդոնական հարցն էլ սպառնական կերպարանքով տապարէզ է գալու՝ բարձրագլուխ կամակորութեամբ: Փաստերը շատ են:

Նախ և առաջ Մակեդոնացիք շարունակում են առաջուայ նման գուրս գալ գէպի բուլգարիա: Մինչև այժմ բուլգարական սահմանն անցել են 7000 հոգի, որոնցից, առնուազն, 7000 հոգի, լաւ զինուած են, ու պատրաստ են ամեն վայրկեան պատերազմ սկսելու: Նշանակալից է նաև այն հանգամանքը, որ փախստականների մէջ գտնուում են թիւրք—մակեդոնական ազգաբնակչութեան ուներ դասակարգերից մի բանի հազար հոգի:

Երկրորդ, ապացուցուած է որ բուլգարական կառավարութիւնը Մակեդոնական կոմիտէները այնպէս դրամատիքական կերպով վակելը բոլորովին լուրջ չէ կատարել: Մինիստր նախագահ դանեւը այս բանը պարզապէս ակնարկում է: Փետր. 17ին Ըզդային ժողովում արտասանած իւր ճոռում ասաց նա բառացի հետեւեալը. “Մակեդոնական խառնակութիւնների պատճառը ո՛չ բուլգարիայում և ո՛չ էլ Մակեդոնական կոմիտէներում պիտի փնտռել, այլ հէնց իրեն՝ Մակեդոնիայի մէջ . . . : Եթէ, բանէ, բարենորոգումների հարցը շուտով լուծում չատանայ, այն ժամանակ մէնք բոնի միջոցներ գործ կը դնենք . . . ”

Պարոն Դանեւը բաւականաչափ պարզ և սրտաբաց բաղաբագէտ է. այդ բանը կը խստովանէ ամեն որ, ով որ նրան ճանաչում է: Նրա խօսքերը, որ բուլգարական հեռագրական գործակալութիւնը Վոլֆի գործակալութեանը չյանձնեց, պիտի լաւ ի նկատի առնել:

Երրորդ՝ եթէ բուլգարական մինիստրութիւնը միամբ տարբար կարծում է, թէ բեռլինի Դաշնադրութիւնն ստորագրող պետութիւնները ո՛չ մի իրաւունք չեն ունենալ, ներկայ պարագաներում, Մակեդոնական հարցն մէջ խառնուելու, ապա Արևելեան Եւրոպայի լուրջ թերթերին առիժ է տալիս կարծելու, որ նա բազարակապէս տեղեակ չէ դիւանագիտական այդ գործերին: Բեռլինի Դաշնադրութեան 25 րդ յօդուածը Աւստրիային լիազօրութիւն տուեց ո՛չ միայն տիրել Բոնիային, այլև աւստրիական զօրքերը կենտրոնացնել Միտրովիցայից էլ այն կողմը, այսինքն, նոյն ինքն Ակեդոնիայում:

Եթէ Աւստրիան այս իրաւունքից — որը բեռլինի Վեհաժողովը փոքր ինչ անդուշով շորեր ինչ անդուշով շուտեամբ նրան է շընորհել — դեռ ևս օգոստ չէ բաղել, այդ չէ նշանակում՝ թէ գարնան բացուելուն պէս՝ որ և է մէկը կարդիլէ նրան գործադրութեան դիմելու: Ուուսաստանը որ չի անիլ այդ բանը, որովհետեւ, կարծում եմ, Բուստարիական գաղտնիութիւնը համաձայնութեան մէջ Ցարեն կառավարութիւնը կատարելապէս համակատ է բեռլինի Դաշնադրութեան ԽХV յօդուածի վերաբերմամբ: Թէ ինչ նշանակութիւն կունենայ Աւստրիական զօրքերի կենտրոնացումը Մակեդոնիայում՝ այդ կարող է ամեն որ երևակայել . . . ”:

Այս բոլորի հետ վերջին օրերի լուրերը շատ նըշտակալից և յիշելու արժանի են: Թիւրքիան շարունակում է առաջ խաղացնել իւր զօրքերը գէպի Մակեդոնական սահմանը: Արանց հակառակ՝ Մակեդոնական և Բուլղարական բազմաթիւ հրոսակախմբերը լուրջ ընդհարումներ են ունեցել թիւրքաց զօրքերի հետ: Երևացել է, որ Մակեդոնացոց զեկավարները բուլղարական սպաներ են եղել: Աւստրիական իւր զօրքերի մի մասը սպառազինել է: Ուուսաստանն էլ եռան-

գուն գործունէութեան մէջ է՝ իւր զօրքի գլխաւոր կենտրօնատեղիներում՝ կիեւ և Օդեսսա: 14 օրուայ ընթացքում 180,000 տուաջին կարգի պահեստի դիւրներ, 180,000 երկրորդ կարգի կարող են զէնքի կոչուիլ:

Որպէս տեսնում էր, իրերը բալբանեան թերակըլդզու վրայ, չնայած Սուլթանի գեղեցիկ «հաւատացնում» եմների և երաշխաւորութիւնների թէ «Շնորհիւ լեհաւափու Սուլթանի խաղաղութիւն է տիրում ամենուրեք ի վառս տաճկահպատակ ժողովուրդների», շատ էլ հանգիս տ ու խաղաղ բնոյթ չեն կրում: Եհա՛ թէ ինչո՞ւ բարձր շրջաններում առանց երկիւղի չեն նայում իրերի այսպիսի ընթացքի վրայ: Հապա որքա՞ն երկիւղով պիտի նայեն այն ոչ-բարձր շրջաններն ուազգերը, որոնց գլխներին են իջնելու ամենածանր հարուածները . . . :

Խեղած մանր ազգեր, որոնց դէմ է լարում թակորդը, որպէս այժմ, նոյնպէս և ամեն ժամանակ:

Օռում է ֆրանսիական ժողովրդի ասպետական և ազատասիրական ոգին և չերոսական սխրագործութիւնների ընդունակութիւնը: Մխիթարական և խրատական երևոյթ...

Դրանսիան այդ օրը, իրա այդ նախանձելի յատկութիւնների հետ, ցուցադրել էր նաև իրա նշանաւոր զաւակների հսեւորական և ճարտասանական հանձարները. որոնք գործ էին ածում յանուն մարդկութեան և սիրոյ գէպի իրենց նման մարդկելը:

Միտինգի նախագահն էր Դէտուրնել գլ կօնստան չապայի միջազգային խորհրդաժողովի ֆրանսիական պատւիրակը և պարլամենտի անդամ: Ճառախօսները աշխազմեաններից (պահպանողական) Դընի կօշէն—պարլ. անդամ, Լեբուա Բօլիո և Լեբոլ. ճախակողմեաններից Պրէսանսէ—պարլ. անդամ և հրապարակախօս (արմատական), Ժան Ժօրէս պարլ. անդամ և պարլ. նախագահի օգնական:

Ճառախօսների պերճախօսութիւնը միացած հմտալից փաստերի և գէպի տանջողները ունեցած գորովի հետ, իրար ձեռքից դափնիներ էին խլում:

Նախագահ Դէտուրնել զլ կօնստան իւր ճառի մէջ, որ մի անողոք ամբաստանադիր է Թիւրքիոյ չարագործութիւնների և Եւրոպայի մեղակցութեան նկատմամբ, ի միջի այլոց ասաց. «ասում են թէ գործի և երկրի աշխարհագրական գիրքի բարդութիւնը, գժւարացնում են խնդիրը և այլն, ո՛չ, մեծ պետութեանց փոխադարձ հակառակամարտը, նրանց բաղաքական բաժանումը և տնտեսական մրցումն են որ սաեղծում են մի անկարողութիւն: Սակայն ասել թէ գրւած խնդիրը անլուծելի է, կ'նշանակէ պնդել թէ յառաջադիմութիւնը կանդ է առել: Անկարելի չէ ներկայ վիճակի բարեփոխութիւնը, այլ անկարելի է այդ վիճակի շարունակութիւնը:» Ապա յիշեց Գլազոսնի իրեն ուղած հետևեալ խօսքերը—«պաշտպանել հայերին և Հայաստանը, կ'նշանակէ պաշտպանել Եւրոպան,—Մի արդար և օրինական հպարտութիւն եմ զգում այսօր, ֆրանսիական մի այսպիսի շքել և մարդասիրական ցոյցի նախագահելու յանուն ճնշածների, ըրիստոնեայ, մահմետական թէ հրեայ՝ ովքեր էլ որ լինեն նրանք:»

Հետզիւտէ խօսեցին պ. պ. Դընի կօշէն, Պրէսանսէ և Ժան Ժօրէսը, որոնք հմայել էին ունկնդիրներին և որոնց ճառախօսութիւնները ընդմիջում էին բուռն և երկարաւու ծափահարութիւններով: Բայց հռչակաւոր սօցիալիստ պարագլուխ Ժան Ժօրէսին էր պահպառ արդ օրի էլ ցնցել, էլէքտրականացնել բազմութիւնը, որի մէջ նաև իւր մրցակիցը չըւնի:

Միտինգին բոլոր մասնակցողների կողմից միաձայնութեամբ ընդունեցաւ հետևեալ որոշումները, ֆրանսիական արտաքին գործոց նախարարին ուղարկելու համար, որը կարգաց Անսատօլ Լեբուա Բօլիո և ցոյցը վերջացաւ երեկոյեան ժամը 6-ին խանդավառութեան և բուռն համակրանքի արտայայտութիւններով:

«Զորս հազար զանազան կարծիքների և համազումների տէր ֆրանսիական բաղաքացիներ, հաւաբեած Château d'Eau թատրոնական դահլիճում 1903 թ. Փետ. 15-ին,

Կ'կատելով Հայաստանի և Մակեդոնիայի սոսկալի և վտանգաւոր վիճակի յարատեւութիւնը,

Կ'կատելով որ այդ դրութիւնը մի սոսկալի գործի է հասարակութեան խզմի ու մշտական վտանգ ընդհանուր խաղաղութեան,

Կ'կատելով որ Բերլինի Դաշնագրի իրագործելով միայն Հայաստանում և Մակեդոնիայում կարելի է վերջ

## ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՐՑ ՓՐԵՆԱՌԵՇԻՄ



Ներկայ տարւայ փետրւարի 15-ին, Պարիզի հայաստանէրները մի նմանը չտեսնաւած միտինգ կազմեցին յօդուած հայաստանի և Մակեդոնիայի:

Չնայած, որ ներկայ լինել ցանկացողների ահագին բազմութիւն կազմելու պատճառով, ցոյցը մի անգամ յետաձգւել և ձեռք էր բերւել Château d'Eau՝ Պարիզի ամենամեծ թատրոնը, այնուամենայնիւ, 4-5000 հոգի հազիւ աեղաւորւելով թատրոնում, մի բանի հազար էլ գուրսը մնացին և անկարող եղան մասնակցել այդ մարդասիրական և խրատական ցոյցին: Սակայն՝ ոչ մի անկարգութիւն տեղի չէ ունեցել ամբողջ ժողովի ընթացքում, թէ ներսը ընդունեած և թէ նոյն խսկ դուրսը մնացած ժողովրդի մէջ: Թէ հոգեկան ի՞նչ տրամադրութիւն է ունեցել ժողովրդը և ինչպիսի զգացմունքներով է համարուած եղել դէպի օրւայ գուրսը մնացին և անկարող եղան մասնակցել այդ մարդասիրական և խրատական ցոյցին իւրեն ուղած հետևեալ խօսքերը—«պաշտպանել հայերին և Հայաստանը, կ'նշանակէ պաշտպանել Եւրոպան,—Մի արդար և օրինական հպարտութիւն եմ զգում այսօր, ֆրանսիական մի այսպիսի շքել և մարդասիրական ցոյցի նախագահելու յանուն ճնշածների, ըրիստոնեայ, մահմետական թէ հրեայ՝ ովքեր էլ որ լինեն նրանք:»

Ահա ցոյցի գրաւիչ արտաքինը, այն էլ ֆրանսիական դիւրաբորբոք և ժողովրդած բազմազան ամբոխի մէջ:

Բայց աւելի սբանչելի է մտքերի, զգագունունքների և միւնոյն խնդրի շուրջը կազմւած գործունէութեան այն արտակարգ համերաշխութիւնը, որով այդ օրը հրապարակ էին եկել ֆրանսիական իրար այնքան հակառակ բաղաքական կուտակցութեանց պարագլութեանը:

Որքան յուղիչ և նշանակալից է այն իրողութիւնը, որ մարտիրոսացող ժողովուրդների հակառագիրը և մարդագայելի է մտքելու այն անձանց մէջ, որոնք ամեն մի խնդրի առթիւ, որպէս անհաշտ ախտեած ախտեաններ, սոսկալի հատաղութեամբ բզքտում են և պատրաստ են բարեկառու ուշագրութիւն ամբողջ 5 ժամ տեղի ատեսնախօսութիւնների ժամանակին գործութեան ժամանակական դադարութիւնը:

գնել անտանելի գրութեան,

Նկատելով այն անմիջական պարտականութիւնը, որ ընկնում է բերլինի Դաշնագիրը ստորագրող պետութեանց վրայ,

Իղձ ու ցանկութիւն են յայտնում, որ Փրանսիական կառավարութիւնը եռանդուն կերպով գործէ վերջապէս իրագործելու բերլինի Դաշնագրի 61 ու 23 յօդածները, համաձայն 1895 թ. Մայիս 11.ի մեմորանդումի, որպէս զի վերջ գրի անընդհատ եղեռնագործութեանց շարքին, որոնք կատարւում են թիւրքիայում մարդկութեան դէմ, ոռանց խտրութեան ցեղի, ազգի, ու կրօնի» :

\* \* \*

Մարդու սիրութը թրթուում է տեսնելով այն կորովալից վերաբերմունք՝ դէպի հայկական հարցը՝ որ ցոյց են տալիս Փրանսիայի ներկայ ականուոր գործիչները: Կան պէտք է նկատի առնել, որ Փրանսիան՝ աւելի ճիշտ ամբողջ եւրոպան երկու մտքով պիտի համամալ, ժողովագրով ամեն անգամ ցցց է տւել իւր զգայնութիւնը և համակրութիւնը դէպի թրթական անարդ լծի տակ տանջող, նահատակող ազգերը: Խսկ պետութիւնները... ահա այն հրէշաւոր մեքենան որը և կոյր է և անզգայ, նրան շարժելու համար անպատճառ հարկաւոր է արեան գետեր հոսեցնել, այդ արիւնածարաւ ճիւղը, որ “Եւրոպական պետութիւնները, անունն է կորում, միայն արեան և մանաւանդ արիւնոտ դաշոյնի առաջ խոնարհում է կորութիւնների մի ուրիշ պետական գործիք Հանօտոյի արիւնախում գործերի մանրամասնութեանց մէջ մտնել, որ կատարեց նա 94-96 թւականներին ձեռք ձեռքի տւած ուրիշ մարդակերներ՝ լաբանօվի և կարմիր շամիգի հետ: Մենք հենց կվերցնենք ներկան և դարձեալ նոյն քրանսիան, որի ազնւամիտ զաւակները ամենաբարձր առաքիւնութեան և մարդասիրութեան դասերն են տալիս իրենց կորովի գործունէութեամբ և վերաբերմունքով դէպի հայերը և մակեդոնացիները: Բայց չմոռնանք որ դրանք մինչև անգամ հասարակ ժողովրդական գործիչներ չեն, այլ բաղաքական և պարլամենտական ականաւոր գործիչներ: Դրանք անդամներն են այն պարլամենտի, որ Փրանսիական ամեն կարգի գործերի կարգադրող և հրամայողն է:

Ալերը նկարագրած միտինգից յետոյ, Փրանսիական մամուլը լուռ չէր, որոնց հրահանգով յօդածների գոհար գարձեալ պատկանում է ժամ ժօրէսին, “Եյժմ ժողովրդի առաջ ենք”, վերնագրով: Մարտ 10-ին Պրէսսանաէ պատգամաւորական ժողովում նորից մի նշանաւոր ձառ արտասանեց Հայկական և Պակեդոնական հարցի առթիւ, զգուշացնելով արտ. գործ. մինիստրին Բալկաններում ստեղծւած վտանգաւոր գրութեան նկատմամբ, յիշցնելով նաև պարլամենտին և մինիստրին Հայկական հարցը Մակեդոնականից զատելու աղետալի լինելը:

Ճառը վերջանւում է բերլինի Դաշնագրի 61-րդ յօդւածը իրագործելու ամենաազգու և միևնոյն ժամանակ սբանչելի վերջանով, որը ծածկուում է բուռն ծափահարութիւններով և պարլամենտի մեծամասնութիւնը ըլ-

նորհաւորում է ճառախօսին: Այդքանից յետոյ գուցէ կարելի էր սպասել, Դեկանսէն, Փրանսիական ներկայ արտաքին գործ. մինիստրը, որը մինչեւ անգամ հայասէր կոչելու: Թունդ ցանկութիւնն ունի, դոնէ մի բիշ ազգութեանց վեցում է թափում հարկագրելու սուլթանին, որ նա իրագործէ ուժօրմները: Թւել է նաև «մի արտաքին գործերի խոհուն պարտականութիւնները» որի համագումարը ինքը հանում է այսպէս: “Փրանսիան չի կարող մոռանալ իւր պարտականութիւնները, որ ունի դէպի մարդկութիւնը, բայց նա պէտք չէ որ մոռանա, և դէպի ինքն ունեցած պարտականութիւնները: Եւ այդ պարտաւորութեանց կատարման առաջին պայմանն է, որ նա սառնութիւն պահպանէ, որ հաստատամտութեան նշան է և մի հանգստութիւն, որ նշան է արթնութեան,,:

Լոյսպէս, ուրեմն, թող յարելի հայասէրները բորբոքին, գործեն, այդ բոլորը շնորհակալութեան արժանի է, իսկ կառավարութեան ներկայացուցիչները միշտ պիտի ընեն “սառնարիւնութեան, հաստատամտութեան և հանգըտութեան”, ընով: Խսկ մե՞նք... ի՞նչ պիտի անենք... մենք չպէտք է մոռանանք, որ եմէ ինքներս ոչինչ չանենք նոյն ընով պիտի վարակւեն նաև այժմեայ հրապարակի վրայ եղող հայասէրները, մենք պէտք է խոսվենք նրանց բունը և ստիպենք խել մեր ձայնը և յարել մեր իւրաւունքները:

Մենք տեսանք այդ հրէշի բունը խոռվելու և նրան շարժման մէջ գնելու միակ միջոցը, արիւնը և դարձեալ արիւնն է: Սակայն չսալաբնք կարծել, արիւն ասելով մեր արիւնը, մորթուելը ասել է, ո՛չ, այլ մեր արիւնը հոսեցնողների արիւնը պէտք է հոսեցնել և յեղափոխականի թշնամու արիւնով ներկաւծ դաշոյնը խոթել նրա աշքը, պէտք է դիմել այդ միջոցին, որ բոլոր միջոցների գործադրողն է:

Պարսկա-թրքական սահմանագլխից մեր բղրակից պ. Mars. գրում է մեզ հետեւալը: — “Այս բոպէս տասցայ, որ վանում Հայերի և Թուրքերի մէջ արիւնակեն մի դիպք է պատահել, որի ժամանակ 100 ի չափ Հայեր և Թուրքեր են սպանուած: Մանրամասնութիւնները տեղեկանալով յաջրդիւ կը գրեմ:

Յօդուածներ, թղթակցութիւններ, աեղեկութիւններ, գրամ ու մանդատ ուղարկել հետեւալ հասցեով: —

M. Bellart, 85, Peckham Rye,

London, S. E. [Angleterre].